№ 192 ՆՈՅԵՄԲԵՐԻ 8 (20) 1878 ՆՈՅԵՄԲԵՐԻ 8 (20) № 192

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և ազն օրերից)։

Ցայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Էժան աղատամտութիւն։—Ներքին տեսութիւն։ Նամակ Գանձակից։ Նամակ Քարվանսարայից։ Նամակ Գօրիսից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Ֆրանսիա։ Սպանիա։ Գերմանիա։ Ցուճասատան։—«Մշակի» հեռագիրներ։ — Ցայտարարութիւններ։—Բանաթիրական։ Աստուածաշնչի ընկերութիւն։

ԷԺԱՆ ԱԶԱՏԱՄՏՈՒԹԻՒՆ

Հատ շնորհակալ թէմա է, որ ընտրել է իր համար ռուսաց «Обзоръ» լրագիրը, էժան աղատամտութիւն անելու համար։ «Մշակը կամենում է խլել մեր թուրք ազգաբնակութենից իր մայրենի լեզուով սովորելու իրաւունքը, բոլոր մարդիկների գլխները միակերպ են ստեղծված, թուրքերն էլ մարդիկ են, ուրեմն նրանք էլ ընդունակ են քաղաքակրթվելու, «Մշակը» ինքն իրան հակառակում է պաշտպանելով հայերի համար մայրենի լեզուով ուսում առնելու անհրաժեշտութիւնը և նոյն իրաւունքը մերժելով թուրք ազգաբնակութեանը.... և այլն, և այլն.... Այսպէս կարելի է գրել ամբողջ հատորներ և ոչ թէ միայն յօդուածներ....

Եթէ սորա հետ միացնենք մի քանի պատմական կասկածելի իրողութիւններ, աշխատենք մերժացնել ընթերցողի դատողութիւնը ճարպիկ կերպով յեղաշրջելով պատմական ճշմարտութիւնները,—և ահա կունենանք «Обзоръ» լրագրի պէս աղմկալի, աջ և ձախ էժան աղատամտութեան շանթեր արձակող յօդուածներ....

Մենք չենք կամենում կրկնել մեր ասածները, մենք դարձեալ կը բացատրենք նրանց։

Ինչի՞ մահմետականութիւնը անընդունակ է իրագործել իր մայրենի լեզուով որ և է քաղաքակրթական գործիչ,—որովհետև նա անշարժ է։ Իսկ անշարժութիւնը մահմետականութեան համար գոյութեան պայման է։ Եթէ իսլամը մի նոր բան ընդունի, փոխվի, առաջ գնայ, նա էլ իսլամ չի լինի։ Ոչ թէ միայն ուսման կերպը, բայց զգեստի ձևը փոխելով մահմետականը անհաւատ է դառնում, մեղանչում է ղուրանի դէմ։ Եթէ թուրքաց տարրական ուսումնարանում մէկը աշխատի մտցնել թուաբանութիւնը կամ առարկայական դասերը մանկավարժական նոր ձևով, նրան կը քարկոծեն։ Ու ինչի մտցնել ուսման մի նոր առարկայ, երբ ղուրանի մէջ ամեն բան կայ, երբ ղուրանը, մահմետականի կարծիքով, իմաստութեան ամենաբարձր աղբիւր է, որից զուրկ է մնում ամբողջ ոչ-մահմետական աշխարհը։

Բայց թողնենք կրօնը, դաւանութիւնը, որ թէև մեծ ներգործութիւն ունի մարդու զարգացման վրա, բայց որ շատ քիչ ներգործութիւն ունի, որքան և բարձր լինէր նա, այն ժամանակ, երբ ցեղը, որ նրան ընդունել է, պատկանում է ոչ-կուլտուրական, սրտոր զարգացման ցեղերի տեսակին, առանց անցեալի, առանց պատմութեան, առանց ինքնուրոյն քաղաքակրթութեան, որ մեծ կապ ունի ցեղերի ֆիզիօլոգիական կազմակերպութեան հետ։

Հատ հեշտ է մահմետականութեան առաւելութիւնները ցոյց տալու համար յիշել ոչ թէ քաղաքակրթութեան անընդունակ մենգօլներին, բայց սեմիտական ցեղին պատկանող արաբներին։

«Обзоръ» լրագրի գիտնականները արդեօք չե՞ն կարծում, որ եթէ արաբները, այդ ամենաընդունակ սեմիտական ցեղը, փոխանակ իսլամի, ընդունած լինէին քրիստոնէութիւնը, կամ գոնէ մովսիսականութիւնը, նրանք մինչև այժմ կուլտուրայի բարձր աստիճանի վրա կանգնած կը լինէին և ոչ թէ գրեթէ ամբողջ աշխարհը ժամանակաւորապէս սրով և գիտութեամբ տիրելուց յետոյ, անհետանային լուսաւորված աշխարհի ասպարիզից և կրկին դառնային անապատի վայրենի բնակիչներ....

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Աստուածաշնչի բարի ազդեցութիւնը անձանց ու ազգաց վրա անտարակոյս աշխարհիս յառաջադիմութեան մէջ ներգործող զօրութեանց գլխաւորն է։ Երբ որ խաղաղական ովկիանոսի կղզիների մէկի թագաւորը Անգլիա էր եկել և այդ երկրի լուսաւորութիւնն ու հարստութիւնը, և նրա բարօրութիւնը տեսել, հարցրեց թագուհուց թէ Անգլիայի այդ մեծ լուսաւորութեան և զարգացման բուն պատճառը որն է։ «Սա է, ասաց քրիստոնեայ թագուհին, ձեռքը մէկ աստուածաշնչի վրա դնելով որ սեղանի վրա էր։ Աստուծու խօսքի փրկարար ազդեցութեան տակ բարգաւաճող Անգլիան բաւական ժամանակէ ի վեր մեծ և զարմացում գրգռող ոյժեր և միջոցներ է գործածում իր առատօրէն վայելած աստուածային շնորհքը համայն տիեզերքի մէջ տարածելու։ Ահա անցեալ տարվայ յունիս ամսումը Անգլիայի աստուածաշնչի ընկերութեան հրատարակած մէկ թերթի թարգմանութիւնը։

ա. Ընկերութեան ծագումը և առարկան։

Բրիտանական և օտարերկրական ընկերութիւնն Աստուածաշնչի՝ հիմնվեցաւ 1804 թւի մարտի 7-ին, որի նպատակն էր տարածել Սուրբ Գիրքը առանց ծանօթութեանց և մեկնութեանց թէ հայրենեաց մէջ, թէ սահմանից դուրս։ Միացեալ տէրութեանց մէջ այլ և այլ լեզուներով տարածված գրքերը միմիայն ընդունված թարգմանութիւնն է։ Ուրիշ երկիրների համար տպվեցին կամ լաւագոյն հին թարգմանութիւնները կամ նորերից ընտրելագոյնները, այնպէս որ նոր թարգմանութեանց համար ամեն հնարաւոր միջոցներ գործ են դրված նրանց ճշգրիտ հարազատութիւնը և ընդհանուր արժանաւորութիւնը ապահովացնելու մասին։

բ. Նրա կազմակերպութիւնը։

Աստուածաշնչի ամեն երկիրներում և ամեն լեզուների մէջ տարածման մեծ գործը կատարելու համար հարկաւոր է յառաջ բերել օրքան որ կարելի է ջանքը, ազատասիրութիւնը, ուսումը և բարեպաշտութիւնը բոլոր քրիստոնեայ ազգերից և ի միասին ձուլել։ Ընկերութեանս կազմակերպութիւնը այնպէս է հիւսված որ իւրաքանչիւր անձն որ այս գործը սիրում է, կարողանայ սրտանց գործակցել։ Ընկերութեանս յանձնաժողովը որ արդէն մեծ յաջողութիւններ գտել է, բաղկանում է երեսուն և վեց աշխարհական անձինքներից, որոնցից վեցը Լօնդօնում կամ նրա շրջակայքում բնակվող օտար երկրացիներ են, իսկ մնացեալների մէկ կէսը Անգլիայի եկեղեցու անդամներ են և միւս կէսը այլ և այլ քրիստոնեայ յարանուանութեանց անդամներ։

գ. Նրա գործողութիւնը և արդիւնքը։

Ընկերութեան սկզբնաւորութիւնը փոքր էր, նրա յառաջադիմութիւնը աստիճանաբար, իսկ նրա արդիւնքը՝ Աստուծու օրհնելովը արդարև զարմանալի։ Սա կարելի է տեսնել հետևեալ իրողութենից.

1. Հազիւ թէ առաւ Աստուածաշնչի ընկերութիւնը իր սկիզբը 1804 թւին Լօնդօնում, իսկոյն ուրիշ շատ ընկերութեանց ծնողը դառաւ։ Հիմա նրա հետ միասին գործող ընկերութիւնների թիւը հետևեալն է.

Մեծ Բրիտանիայում և Իրլանդիայում	4,496
Անգլիայի միւս երկիրներում	1,215
	5,711
Իբերնիոյ ընկերութեան հետ կապված	531
Օտար երկրների ընկերութիւններ իրենց ճիւղերովը	4 000
ընդամենը	10.242 հատ

2 Երբոր Աստուածաշնչի ընկերութիւնը իր գործողութիւնը սկսեց թերևս յիսունի չափ ամբողջ կամ մասն թարգմանութիւններ կային, իսկ այն ժամանակիցն ի վեր այդ թիւը մեծապէս աճել է։ Հիմա երկու հարիւր և տասը լեզուներ կան որ նրանցով այդ ընկերութիւնները սուրբ գրոց թարգմանութիւնը, տպագրութիւնը և տարածումը կատարում է

ուղղակի . . . . . 157 լեզուներով	ամենը 210 լեզու
անուղղակի 53 լեզուներով կամ բարբառներով. . .	

Հին և նոր թարգմանութեանց թիւը (բաց առնելով այն այլ և այլ գրերով տպագրութիւնները) հասնում է հիմա 269։ Սրանց չորս-հինգերորդին աւելին կատարվել են 1804 թւից ի վեր։

3. Աստուածաշնչի տարածումն էլ ընդարձակ սահմաններ է ստացել.

Այս ընկերութիւնը իր գոյութեան սկզբի չորս տարումը տարածեց . . . . 81,157 հատոր,

իսկ անցեալ տարի մենակ տարածվել է 2,619,427 հատոր։

Ուրիշ ընկերութիւնք որ այս ընկերութեան օժանդակութեամբ կառուցվել են, իրենց սկզբիցը մինչև հիմա տարածել են յիսուն և երեք միլիոնի չափ հատորներ, այնպէս որ Աստուածաշնչի ընկերութեան միջոցովը տարածվել է աշխարհումս համարեա թէ հարիւր և քսան եօթը միլիոն գիրք կամ բոլոր Աստուածաշունչ, կամ նրա մասերիցը։ Կարելի է ընդունել որ սոյն դարուս մէջ, սուրբ գիրքը թարգմանելով, տպելով և տարածելով աստուածային ճշմարտութիւնները աշխարհիս բնակիչներից մինչև եօթը հարիւր միլիոնին հասանելի և հասկանալի է դառել։

Այս վերջին տարին գործել է այդ ընկերութիւնը աշխարհիս գրեթէ ամեն մասներում և տէրութիւններում՝ Ֆրանսիա, Բէլգիա, Հոլլանդիա, Գերմանիա, Շվէյցարիա, Աւստրիա, Իտալիա և միւս շատ տեղեր կան մեծ մթերանոցներ, գործակալներ և աշխատողներ։ Ռուսաստանում տեղի ունեն կառավարութեան հրամանով երկու գործակալ, որոնցից մինը նստում է Պետերբուրգում և միւսը Օդէսայում. այդ երկու քաղաքներումն էլ ընդարձակ չտեմարաններ ունեն այլ և այլ լեզուներով տպված Աստուածաշունչներով լիք. հիմա ծախում են Ռուսաստանում միայն վաթսուն լեզուներով սուրբ գիրք։ Օդէսայի գործակալը ծախել է այս տարի 81,821 հատոր գիրք, իսկ Պետերբուրգինը 180,927։ Այս երկու գլխաւոր գործակալները ունեն և ուրիշ ճիւղեր բացած ուրիշ քաղաքներում, ինչպէս՝ Մոսկվայում, Խարկովում և այլն։ Վերջին ժամանակներս էլ մէկ ճիւղ է բացվել Թիֆլիսում և այն տեղ էլ ծախվում է մինչև 30 լեզուներով սուրբ գիրք։ (Այս կտորս աւելցրած է թարգմանչիցը)։

Իրաց այս վիճակը յայտնելը չէ թէ անում ենք պարծենալով, այլ խոնարհութեամբ գոհանալով Աստուծու շնորհքիցը որ բարեհաճեց գործածել այս ընկերութիւնը իր սուրբ նպատակները կատարելու համար։

Դ. ընկերութեան ելմուտքը։

Ընկերութիւնը ստացաւ այս վերջին տարում 222,191 լիվր ստերլինգ 5 շ. և 6. պ. և ծախսեց դարձեալ այս տարումս . . . . . 217,390 « » 13 շ. և 1. պ. (թարգմանչից)։ Մէկ լիվր ստերլինգը անում է համարեա թէ 8 մանէթ ռուսի փող, որ ասել է թէ այդ ընկերութեան մուտքը եղել է մէկ միլիոն և եօթը հարիւր հազար ռուբլ մէկ տարվան մէջ. և ծախքը գրեթէ նոյնչափ։ Քանի որ Աստուածաշնչի ճշմարտութիւնները այդպէս սիրող մարդիկ կան աշխարհիս վրա, որ սուրբ գիրքը տարածելով քրիստոնէութեան հիմը հաստատ պահելու աշխատում են, գոհանանք Աստուածանից որ եւրոպացիք այն աստիճան չեն հեռացել Քրիստոսի հաւատիցը ինչպէս որ մեզանում ոմանք կարծում են. բայց միւս կողմանէ էլ մեզանից հարցնենք թէ մեր արածը ինչ է։

* * *

Թիւրքաց լեզուի զարգանալու անընդունակութեան վրա մենք մինչև անգամ աւելորդ ենք համարում խօսել: Աւելորդ ենք համարում խօսել նոյնպէս ձայնաւորներ չունեցող արաբական տառերի գրագիտութիւնը ամբոխի մէջ տարածելու անընդունակութեան վրա: *)

Մեզ գուցէ «Обзоръ» լրագրից աւելի լաւ յայտնի է, որ Կ. Պոլսում կան մի քանի հատ թիւրքաց լրագիրներ, բայց նրանց կարդում է թիւրքերի մի շատ նեղ շրջան, և հայերէն տարերով հրատարակվող թիւրքաց լրագիրներն անգամ աւելի շատ են կարդացվում բուն թիւրքերից, բան թէ արաբական տառերով հրատարակվածները: Պարսկաստանում էլ կայ մի հատ լրագիր, որ ամբոխի մեծամասնութիւնը անկարող է կարդալ:

Իսկ ինչ որ վերաբերվում է ռուս լրագրի այն մտքին թէ կարելի է հայոց ուսումնարանների տեղ ֆրանսիական կամ գերմանական ուսումնարաններ կովկասեան թուրքերի համար հիմնել, մենք դրա դէմ ոչինչ չէինք ունենայ.... Բայց որովհետև այդ անհնարին է, իսկ հայոց ուսումնարաններ ամեն տեղ կան, որտեղ թուրքերը բնակվում են խառն հայերի հետ, այդ ուսումնարանները այնու ամենայնիւ թուրքերի չեղած ուսումնարանների տեղ կարող էին բռնել, վերջապէս որովհետև գրեթէ ամեն տեղ որտեղ թուրքը հայի հետ խառն բնակվում է, նա ազատ խօսում է հայերէն, միայն գրել կարդալ չը գիտէ, այդ պատճառներով մեր միտքը իրագործել աւելի հեշտ կը լիներ, քան թէ «Обзоръ» լրագրի առաջարկածը:

Ընթերցող, դուք չէք նկատել, որ ոչինչով չէ կարելի այնքան վնասաւորել մի պառաւ և տգեղ օրիորդի, որքան խօսելով նրա ներկայութեամբ կանանց գեղեցկութեան մասին....

Նոյնպէս մարդկային զանազան ցեղերի ուղեղի ընդունակութեան տարբերութեան գաղափարը մերժում են գլխաւորապէս այն մարդիկ, որոնք իրանք չեն յայտնվում առանձին խելքով....

*) Արաբական տառերով գրել կարդալ սովորելու համար առս տարուց աւելի է հարկաւորվում: Եւ եթէ մի ամենագիտնական մօլլային էլ իր արաբական տառերով մի նոր, նրան անյայտ բառ գրես, նա չի կարողանայ կարդալ, որովհետև նա տեսնում է միայն բաղաձայն տառերը և չիմանալով բառի իմաստը չէ կարող գուշակել, թէ ինչ ձայնաւորներ պէտք է երևակայել բաղաձայն տառերի մէջ տեղ:

«Обзоръ» սիրում է մարգարէանալ: Փորձենք և մենք մարգարէանալ: Ռուս լրագիրը թող խօսի այժմ թիւրքիայի վերջին տարիների, կամ վերջին դարերի առաջադիմութեան մասին: Բայց թող չը մոռանայ որ այդ պետութեան փոքր ի շատէ առաջադիմութեան պատճառը, նրա պետական և զինուորական մարդիկների վերջին ժամանակի յայտնվելը դարձեալ ապացուցանում է մեր թէորիայի ճշմարտութիւնը: Թիւրքաց բարձր դասի մէջ եթէ վերջին ժամանակները նկատվում է առաջադիմական շարժումը, այդ այն պատճառով է որ այդ դասի ցեղական յատկութիւնները փոխվել են՝ բարձր դասի, զինուորական, պետական մարդիկ՝ էլ բուն մոնգոլներ չեն, նրանց մեծ մասը, մինիստրից սկսած մինչև զօրքի գրեթէ վերջին օֆիցերը հարեմի ծնունդներ են, ուրեմն քրիստոնեայ, օտարազգի կանանց որդիք են.... Այո՛, ցեղի խառնուրդը միակ փրկութիւն է ապագայ թիւրքիայի համար: Ուրիշ կերպ իսլամի և մոնգոլական ցեղի մէջ ոչինչ փոփոխութիւն չէ կարելի մտցնել:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

—

4 Նոյեմբերի

Կարդալով «Մշակի» 164 թուահամարը, պէտք է խոստովանել, որ թէև գերապատիւ Թէոդորոս վարդապետ Շերկունու մշտապէս հոգացողութիւնը մի հնադարեան թարգմանչաց վանուց նորոգութեան, բարեզարդութեան և նրա մօտ մի բարենպատակ վանական դպրոց բարեկարգելու մասին շատ գովելի և օրինակելի է, մեր հինաւուրց, նուիրական յիշատակները պահպանելու նկատմամբ, բայց այնու ամենայնիւ մենք չենք կարող իրաւացի համարել նրա այն առաջարկութիւնը, որ բարձրագոյն հոգևոր իշխանութիւնը «վիճակային արդիւնքից» ապահովացնէր թարգմանչաց դպրոցի ռուսաց լեզուի և ձայնագրութեան վարժապետների ռոճիկը, մինչդեռ այդ ապահովութիւնը հէնց իր դրացի հարուստ վանքերը կարող են տալ. և մենք չենք հասկանում թէ ինչի գերապատիւ Թէոդորոս հայրը վարագուրված և կարծես լեզապատառ եղած, անուդողով է մատնանիշ լինում իր դրացի Ծաղկոցայ, Զարէքայ, Բանանցայ և միւս վանքերի վրա, ուր և մի աշակերտ ոտք չէ կոխած մինչև օրս, բայց նրանց կանանչ—կարմիր վանահայրերը, տուուզ ժամահարները, դահիճ—բանկիր վարդապետացուն, հերակորոյս զաղախեցին հարիւրներով հազարներով կը վատնեն յայտնի և անյայտ տեղեր, Թիֆլիսում և Աղնախում ուրիշների անուամբ վաճառատներ կը բանան, գործարաններին ամսական հարիւրաւոր բուռը ածուխ կը տան անտէր անտառներից, բանկերում հազարաւոր բուբլիք կը շահացնեն և երբեմն հազարու մի տեսակ թող կը փչէն ժողովուրդի աչքերին: Օրինակի համար վերցնենք Զարէքայ վանքը, որը տարեկան միմիայն 100 բուբլ կը տայ Փիբի ամենաողորմելի դպրոցին, երբ այդ վանքը տարեկան 3000 բուբլ անտրտունջ կարող էր տալ 8-10 դպրոցների ապահովութեան համար: Յայտնի բան է, քանի որ այդ սրբակեաց պարոնները Գանձակում, Փիբում, Թիֆլիսում և հեռու վայրերում հզօր պաշտպաններ ունեն անկարելի է դիպչել դրանց չահասիրական բարակ երակներին, ուրեմն նրանցից հաշիւ պահանջելը մնաց միւս կեանքում, ուր դատաստանը անաչառ և հրապարակական է և մեղաւորներին խորամանկները, Յովսէփ կամ Կիրակոս «ապէրները» չեն կարող ոչ թէ պաշտպանել այլ և օվսաննաներով խրախուսել յայտնի շնորհավաճառութեանց համար.... Ափսոս, մի զօրեղ ձեռք չը կայ, որ խարազանով վարէր մեր մի քանի «անտիկ—մօրէ», վարդապետներին վասն զի նոքա «տունն Աստուծոյ այր աւազակաց արարին:»

Մեզ հաւատացնում են, իբր թէ էջմիածինը և վիճակային հոգևոր իշխանութիւնը ամենևին չունեն իրենց ցուցակներումը յիշած «Ծաղկոցայ» բազմարդիւն անապատը և նրա ծաղկեալ կալուածքը, որից տարեկան 250—300 բուբլ միայն օրի կը ծախվի և որի արդեանց աղբիւրները ուղղակի մտնում են բարեշնորհ վանահօր և իր թոռների որովայնները: Ասում են որ Ծաղկոցայ վանահայրը լիապէս ապահովացնելով իր ազգն ու գերդաստանը, այժմ պատրաստվում է գնալ Ս. Երուսաղէմ և կենսատու փրկչական գերեզմանի մօտ լալ և զղջալ իր մեղքերը: Զարմանալի է, որ մեր ծածուկ ապրող վանահայրը դեռ ևս խորամանկի թարթափը չի ընկել, որ մի «թափ» տար նրա քսակը....

Վերջապէս ցանկայի էր որ բարձրագոյն հոգևոր իշխանութիւնը ուշք դարձնէր Գանձակի գաւառի վանքերի և նանց կալուածների մեծաքանակ արդեանց վրա ու խոհեմ հաւասարակշռութիւն պահպանելով միաբանից համեստ ապրուստի մէջ՝ աւելորդը յատկացնէր Գանձակի գիւղօրէից միւս աղքատ դպրոցներին, որոնք իրենց բոլոր յոյսը դրած են հոգևոր տեսչութեան հայրական խնամքի և օրհնալից քաջալերութեան վրա:

Յ. Ա.

ՆԱՄԱԿ ՔԱՐՎԱՆՍԱՐԱՅԻՑ

—

25 Հոկտեմբերի

Հայերը սիրում են որ, առանց ոչինչ անելու իրանց գովեն, մի խօսքով—ուրիշը դադի, իրանք ուտեն..ես էլ, որպէս հայ, ազատ չեմ այդ ցանկութենից:

Օրինակ. անցեալ օրերում կարդացի «Մշակի» մէջ (№167) մի նամակ, ուր գովվում էր իմ հայրենիքը—բեղիդենցիայ մականունին արժանի Քարվանսարան: Եւ որքան դուր եկաւ ինձ այդ գովող յօդուածը:—Ուղիղ, մթթէ մեր Քարվանսարան շատ բանով է յետ մնում ձեր Թիֆլիսից, որ առաջինը՝ գիւղ, իսկ վերջինը քաղաք կոչվի:—Այդ՝ անտանելի դատապարտութիւն է... Այս նամակով ես պարտք եմ համարում, որպէս հարազատ որդի նոյն գիւղաքաղաքի, դուրս բերել համեմատութեան մէջ Թիֆլիսը Քարվանսարայի հետ, որով, ոչ միայն գոված կը լինեմ երկուսին ևս, այլ գուցէ մանկավարժական մի յօդուած ևս գրած լինեմ պ. (անունը չը տանք) ընթերցարանի համար, իբրև համեմատական ձև, որից խիստ զուրկ են մեր ընթերցարանները...

Փողոցների կեղտոտութեամբ նախատված է Թիֆլիսը.—Քարվանսարան այս կողմից շատ գերազանցում է: Գիւղը չը մտած խորհուրդ կը տամ (բայց առանց խորհուրդ տալու էլ) դուք կը փակէք ձեր քիթը: Այնտեղից այնպիսի խնկահոտութիւն է բուրում, որպիսին գուցէ պատահած չը լինի ձեզ էշակ-մայդանում...

Զանազանութիւնը խիստ մեծ չէ:

Էշակ-մայդանում վայր ընկնող քնքոյշ դամաների գուցէ փեշերը ցեխոտվին, իսկ անձրև օր, մեր գիւղի փողոցները անցնելու համար, հարկաւոր են ուղղի ոտներ: Այս բնական կարևորութիւնը ստեղծել է զաղախեցիների համար ոչ միայն անզգայ հոտոտելի, այլ և երկար ոտներ... Փոքր բան չը կարծէք այս տեսակ «գերազանցութիւնը»...

Մեր գիւղի գօլովինսկիյ պրօսպէկտը սկսվում է Գէվօի դռքանի դռնից և ձգվում է մինչև Մաթոսանց տան դուռը: Մեր բանաստեղծական պրօսպէկտը ձերի նման, ոչ թէ երկու կողմից պատած է եռայարկ շինութիւններով, այլ պատապարված այն հնօրեայ փէյտոնների կիտուկներով, որոնց վրայից առաւօտ-երեկոյ թռչնուկի տալով, փեչերը վերքաշած Ղուկաս հայրը անց և դարձ է անում, բայց գոնէ մի անգամ ևս սիրտը չէ զօրում, որ հասկացնի գիւղացիներին այդ պատուական փէյտոնների մարդասպանութիւնը...

Քարվանսարան էլ ունի հոյակապ եկեղեցի:—Դեռ չեմ խօսում նրա մասին:

Մեր վաճառականները ևս ունեն բիրժա: Մինը Մուռլովի գոմը, միւսը Գոլոլովի դուքանը: Սրանք էլ Թիֆլիսեցի վաճառականներից յետ չեն մնում. նշանաւոր են առնել՝ չը տալու մէջ, ուտել՝ հաստանալու մէջ, ասել՝ չանելու մէջ և մանաւանդ իրանց հարստացնելու՝ ուրիշին մանկացնելու մէջ... Կամակոր, հրպարտ, գռփող, ասեղ մաշկող, ծառայի գին կտրող, նրա հետ դերու նման վարվող... Սա քիչ բան է:

Դուք կը տեսնէք և այստեղ հայերէն ուղիղ չիմացող և իմանալու հոգս չանող, բայց ռուսերէն, փրանցուզերէն կոտրատողներ: Մեր հերվայ փալչի Գիւլին անգամ ձեր երևելի ադվոկատից կը գերազանցի իր խօսելու և համոզելու մէջ...

Մեր գիւղում նոյնպէս դպրոցներ կան. (երկուսի մէջ էլ ճանճերն են տրզզում). մեր դպրոցներն էլ անկելանոց են. այնտեղ մտնող աղգասէրի աչքը թակես, էլ դուրս չի գնայ, թէև իմանայ էլ, որ ինքը խաբեբայ է, աղուէս է, խարթիչ է, աչքակապ է... Բայց և որ տեղի շատ հոգաբարձուները չեն բանկերի պաշտօն կատարում, դպրոցի փողից չահվում, գիւղը գընում. ուզող եղաւ՝ (գուցէ) յետ տալիս, թէ ոչ «փառաց ի փառս» անում...

Մեր գիւղում ևս կան հարուստներ, որոնցից շատերը փողը Աստուծու տեղ պաշտում և, հարկաւոր դէպքում, թէև աղգասէր ձևանում, բայց կոպէկ ցնծալիս, հոգին հեռը տալիս...

Քարվանսարան ևս ունի իր ուսումնական որդիները, որոնցից շատերը «մարդարէ յիւրում գաւառի պատիւ ոչ ունի» ասելով գնում են լուսաւորված էջմիածինը լուսաւորելու....

Մեր գիւղումն էլ կան «պօդրուչկիյ» անող զոյգ տատրակի պէս փողոց չափող, մեծաքիթ հաստապռօշ, ամպ օրն անգամ ամպհովանի բռնող, միջնադարեան սովորութեան պէս, անօթուց քացախ խմող, լղար՝—գիտնական ձևացողներ...

Մօղաներից զուրկ չէ և մեր գիւղը: այն տեղ էլ է մարդը կնկանը սպանում, կնիկը մարդուց հեռանում. բայց ամենամեծ մօղան անուանափոխութիւնն է. Գրիգորը-Գրիշայ, Մկրտիչը-Միկիտա, Նիկիտա կամ Միկիտիչ, Միխակը- Միխա կամ Միխայիլ, Հեղինէ—Էլենա. իսկ Մարտիրոսը-Մարտին կամ Մրտիրոս, Թաթուս, Մաթուս, և այլն:

Մի բան, որով քաղաքից գերազանցումէ մեր գիւղը, կարելի է համարել այն, որ այստեղ ոչ դրօշկա կայ, ոչ ֆայէտոն.—Էշերն ու գոմէշները լրացնում են այս պակասութիւնն էլ: Անասունները այստեղ աւելի, քան մի այլ տեղ, գտնվում են մեծ նահատակութեան մէջ: Սա էր պատճառը, որ այս տարի մեր աղգասէրներից մի նը ուզեց «կենդանիների ապահովութեան» ընկերութիւն հիմնել, ինքն էլ գօլովայ ընտրվել իր եղբօրն էլ օգնական կարգել, բայց, աւելի «Մշակի» հսկողութենից վախենալով թողեց և փախաւ...

Մեր գիւղն էլ ունի իր դատաւորը. այն զանազանութեամբ միայն, որ քաղաքի դատաւորները արդարութիւնը սեղանի վրա են բազմեցնում, իսկ մեզանում քոխվէն արդարութիւնը դատարանից դուրս է խաղում, և դանգատաւորներին շատ անգամ փողոցում կարմրած թշերով լսում...

—Աենեին ամօթ չէ մեր գիւղի համար, որ նա էլ, Թիֆլիզի նման, դեռ չունի ոչ թատրոն և ոչ թատ. «խումբ», բայց սորա տեղ նա ունի՝ աշուղների, փալչիների, զալաչիների խումբեր, որոնց յօժարութեամբ է ընդունում...

Քարվանսարայում, փոխանակ անշունչ լրագիրների, կան չնչաւոր երկոտանի լրագիրներ: Նրանք լեզու ունեն, երբէք ցէնզօրայի տակ չեն ընկնում և ոչ մամուլի տակ ճընչվում. նրանք՝ ոչ թէ ամենօրեայ, ամենրօպեայ են...

Նրանք՝ առաջնորդող, ներքին-արտաքին լուրեր, բանասիրական—այս ամենը չունեն. ձեռացումը կուզեն կը ներկեն, ումը-չէ, կը գովեն, կով կը չինեն...

Նրանք կոչվում են, Ջաւատ բէգ, Ալէքսի Ալէքսանդրպօլսկի, և այլն.

Եկող անգամ, եթէ ժամանակ ունենամ, այդ կենդանի լրագիրների վրա կը խօսամ...

Էլի-Նա

*) Արաբական տառերով գրել կարդալ սովորելու համար առս տարուց աւելի է հարկաւորվում: Եւ եթէ մի ամենագիտնական մօլլային էլ իր արաբական տառերով մի նոր, նրան անյայտ բառ գրես, նա չի կարողանայ կարդալ, որովհետև նա տեսնում է միայն բաղաձայն տառերը և չիմանալով բառի իմաստը չէ կարող գուշակել, թէ ինչ ձայնաւորներ պէտք է երևակայել բաղաձայն տառերի մէջ տեղ:

ՆԱՄԱԿ ԳՕՐԻՍԻՑ

—

13 հոկտեմբերի

Սեպտեմբեր ամիսը մօտեցած իր վախճանին հարկը սարսեց ինձ գնալ դէպի Ծղուկ (Սիսեան) գաւառը, որ համարվում է Զանկեզոր գաւառի մի մասը։ Ես ժամի 5-ին կէսօրից յետոյ հասայ Բուռնակօթ գիւղը. այստեղ ես մի յանձնարարական գործի մասին մնացի երկու օր, այդ երկու օրվայ ընթացքում օգուտ քաղեցի ծանօթանալ տեղական ժողովրդի կեանքի և դրութեան հետ, որը ընդհանրապէս պարապում է հողագործութեամբ և անասնապահութեամբ։ Այս տարի թէ այս գիւղում և թէ միւս գիւղերում բուսականութեան բերքերը սովորականից դուրս առատ են եղել՝ համեմատելով անցեալ տարիների հետ, բայց անընդհատ անձրևների տեղալը պաճառել է մեծ վնաս գիւղացիներին, այնպէս որ կալերում դիզած ցորենի, գարու և կտաւատի խուրձերը բոլորովին ծլած և կանաչած են։ Կլիման բարեխառն է այստեղ և առողջարար, ժողովուրդը թէև անզարգացած, սակայն զգում է ուսման կարևորութիւնը և պէտքը։ Չեմ սխալվի ճիշդն ասելու, որ մի քանի անգամ ազգային պարբերական թերթերի հրատարակութիւնը բաւականի զգաստացրեց ժողովրդին և բաց արեց նրա աչքերը դէպի ուսումնարանական հարցը, մանաւանդ Զանկեզորում։ Գիւղերում տեղ տեղ լսգիրներ ևս կարդացվում են։ Ինչպէս տեսայ մի օրինակ ստացվող «Մշակը» ձեռից ձեռք անցնելով գիւղացիների մէջ կարդացվում էր զանազան տեղեկութիւններ իմանալու համար։

Գիւղի եկեղեցու մօտ մի քանի երիտասարդներ չինել են մի շտեմարան և մօտ 1000 պուդ ցորեն են հաւաքել ուսումնարան հիմնելու համար։ Այսպիսի հեռաւոր գիւղերում անգամ զգում են ուսման հարկաւորութիւնը։

Այս գիւղը որ բաղկանում է 140 տուն հայ գերդաստանից ունի մի հին կամարակապ եկեղեցի, բայց անդարդ։ Գիւղի քահանաներից երկու զառամեալ եղբարք անցեալ տարիներում խնդիր են ներկայացրել Վեհափառ Կաթողիկոսին, որ թոյլատրէ նրանց իրանց հաշուով երեք սենեակից բաղկացած մի դպրոց չինել գիւղի եկեղեցու գաւթում բայց մինչև այսօր չեն ստացել լուծումն, սպասում են Նորին Օծութեան կարգադրութեանը։ Այստեղի ժողովուրդը, ինչպէս երևում է, բաւականի սէր և համակրութիւն ունի դէպի ուսումն և ուսումնարանը, բայց ինչ արած որ չը կայ մի գործունեայ անձն, որ կարողանար առաջ տանել ժողովրդի այդպիսի մի բարենպատակ ցանկութիւնը և ազնիւ զգացմունքը։ Ցանկալի կը լինէր, որ յիշեալ երիտասարդները շարունակէին հանգանակութիւնը հաւաքել գիւղացիներից ցորեն և դրամական նուիրատուութիւններ։ Անտարակոյս, մօտակայ գիւղացիներն ևս ձեռնտու կը լինեն այդ բարեգործական նպատակին և յուսալի է որ չեն զլանայ այդպիսի նոհաբերութիւններ անելուց։

Սիսական

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են, որ ԱԼԻ գիւղի Դաւիթ քահանան հրաժարեցրած է պաշտօնակատարութենից իր գործած անկարգութիւնների պատճառով, իսկ նրա ծուխը հովելու համար նշանակված է մէկ ուրիշը։ Երբ այս վերջինը Դաւիթ քահանայից խնդրում է եկեղեցու բանալիքները, նա ատրճանակով սպառնում է քահանային։

—

Հոկտեմբերի 7-ին ԹԻՖԼԻՍԻ Կրուժօկում պ. պ. Բաուէրի և Շումախէրի կօնցերտզրական երեկոյ շատ աջող կերպով անցաւ։ Ուրբաթ օրը պարոնները տալու են նոյն դահլիճի մէջ մի երկրորդ կօնցերտ։ Հրաւիրում ենք մեր հասարակութիւնը այցելել այդ կօնցերտը։

—

Արդէն բաւական ժամանակ է ՄՕՍԿՎԱՅԻ մի քանի հայ ուսանողներ գրականական երեկոներ են կազմում մայրենի լեզուի մէջ վարժվելու և մայրենի լեզուով զանազան գրաւոր աշխատութիւններ պատրաստելու նպատակով։ Գրում է մեր թղթակիցը։ Նոյնպէս նրանք աշխատում են կարողութեան չափ նպաստել հայ ուսումնարանական գործին և լրացնել ուսումնարանների անհրաժեշտ պիտոյքները—ինչպէս են զանազան առարկաների դասագրքերը, որոնց կարօտութիւնը շատ զգալի է մեր ուսումնարաններում։ Բայց անշուշտ այս դէպքում նրանց պիտի օգնեն մեր ուսումնարանական գործին տեղեակ անձինք. յիշեալ ուսանողները հեռու լինելով հայ ուսումնարաններից—չեն կարող մի առ մի իմանալ հայ մանուկների դասարանական պիտոյքները։ Ցանկալի էր, որ այս խնդիրը ուշի ուշով քննվէր և լրագրութեան միջոցով յայտնվէր թէ ինչ դասագրքի կարօտութիւն ունին մեր ուսումնարանները, որոնք են ամենից աւելի անհրաժեշտները և թէ ինչպէս պէտք է առհասարակ դասագիրք պատրաստել, մեր ուսումնարանների պահանջմունքներին համապատասխան անելու համար։ Այս քննութիւնը և այս զեկուցումը մանաւանդ կարևոր և օգտաւէտ են. նախ մեր ուսումնարաններին, որոնց համար դասագրքեր պիտի պատրաստուին, և ապա յիշեալ ուսանողների, որոնք հիմնաւորապէս տեղեկանալով բոլոր պահանջմունքներին—աւելի եռանդով և յուսով կաշխատեն հոգալ ուսումնարանական պիտոյքները լրացնելու։»

—

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են. «հայ հասարակութեան մէջ օրերումս սկսվելու է հանգանակութիւն յօգուտ Արարատեան ընկերութեան։ Այս ազգօգուտ ձեռնարկութեան համար—որպէս և ամենայն մի ազգային գործի—հոգացողը է տեղւոյս մեծապատիւ աւագ քահանայ Սուրենեանցը, որ յուսով ենք ոչինչ ջանք և աշխատութիւն խնայելու չէ իր կողմից յիշեալ ընկերութեան հանգանակութեանը որքան կարելի է ընդարձակ ասպարէզ բանալ. իսկ հայ հասարակութիւնը իր առատաձեռնութեամբ կաշխատէ և այս դէպքում գործով ցոյց տալ իր խորին համակրութիւնը «ասիացի եղբարց» մշտաւոր լուսաւորութեան և յառաջադիմութեան գործին։»

—

Մեզ հաղորդում են, որ ՄՕՍԿՎԱՅԻ հայ ուսանողութիւնը պատրաստութիւն է տեսնում ամսիս վերջին մի ներկայացումն տալ յօգուտ չքաւոր հայ ուսանողների։ Ներկայացնելու են «Պէպո» Սունդուկեանցի 3 արարածով կոմեդիան և երկու վոդեվիլ. մէկը հայերէն և միւսը ռուսերէն։ Յուսով ենք, որ այս բարեգործական նպատակով ներկայացումը իւրաքանչիւր տարվայ պէս յաջող կանցնի։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

«Indépendance Belge» լրագրի Փարիզի թղթակիցը նոյեմբերի 3-ից գրում է հետեւեալը։

«Աջակողմեանները կասպած են տեսնելով թէ ինչպէս քննադատում են իրանց վարմունքը. նրանք իրանք իրանց այնպէս են յաղթված զգում, որ չեն կարողանում ծածկել իրանց զարմացումը՝ տեսնելով թէ ինչպէս ամենամեծ խնամքով պատմում են դրանց գործի անյաջողութիւնները. զուցէ նրանք յանցաւոր էլ չեն. նրանք կարող են իրանց քէֆին բացատրութիւններ պահանջել, քուէարկել կաբինէտի դէմ. դրանով դրութիւնը չի փոխվի, մինիստրութիւնը չի դրդվի և սենատի մեծամասնութիւնն էլ ոչ իր վարկը և ոչ իր ազդեցութիւնը կը կորցնի։ Այժմ որ ձախակողմեանները հաւատի են՝ որ մեծամասնութիւնը իրանց կողմը կը մնայ, էլ սխալ կը լինի նրանց մանրակրկիտ հետազօտութիւնները, աշխատել ցոյց տալ աջակողմեանների գործելու եղանակը։

«Եւ պէտք է խոստովանած, որ նրանք շատ էլ անհանգիստ չեն լինում այդ բանի մասին, իսկ եթէ ձախակողմեանները աշխատեն ցոյց տալ նրանց վարմունքները, այդ կը նշանակէ, որ նրանք կամենում են ցոյց տալ երկրին, սենատօրական ընտրողներին, որ աջակողմեանները միշտ, ինչպէս և առաջ՝ անուղղելի են, և եթէ նրանք մատնեն՝ չը նայելով իրանց յաղթվելուն, դարձեալ մրցել կաբինէտի հետ, այդ կը նշանակէ աւելի սաստիկ արգելքներ գցել կառավարութեան առաջ՝ այն ժամանակ երբ յաղթութիւնը նոյն իսկ ձախակողմեանների կողմը կը մնայ։ Ահա մանաւանդ թէ ինչ են կամենում ապացուցանել հանրապետականները, պատմելով կուլիսների այս փոքրիկ նենգութիւնները (intrigue)։

«Ընդդիմադրող կուսակցութեան թերթերը պնդում են՝ թէ այսպէս սենատի աջակողմեանների վարմունքը խիստ կերպով քննելով, ձախակողմեանները հեռևում են մի տակտիկայի, որով կամենում են փոխել այն ճշմարիտ հարցը, որ մինիստրութեան և ձախակողմեանների մէջ է. այժմ խօսքը նրա վրա է՝ որ մենք կամենում ենք գիտենալ, այո, թէ ոչ, ունե՞նք արդեօք մենք մի կառավարութիւն, կամ գոնէ այդ կառավարութիւնը մինիստրների ձեռքում է գտնվում թէ պ. Գամբետտայի. իսկ «Le Français» էլ աւելացնում է. «պ. Դիւֆօրը եթէ բարեհաճուս է Բօմանսի պրոգրամմային, թող ասէ։ Չէ՞ բարեհաճում։ Աւելի ևս հարկաւոր է որ նա ասէ» և բարոյականութեան այդ ուխտի լրագիրը վերջացնում է այսպէս. «Այսպէս է դրված հարցը ներկայ նստի մէջ։

«Ինչպէս երևում է՝ աջակողմը շատ է կամենում օգուտ քաղել Գամբետտայի ճառից՝ ընտրողական մրցման համար։

«Կանդիդատներից մի քանիսը ասում են ընտրողներին, որ նրանք պահպանողական և արմատական հասարակապետութեան միջները պէտք է ընտրեն, որի Բօմանսի ձեռքով առաջարկած պրոգրամման ձգտում է ոչնչացնել բանակը, կրօնը և արդարադատութիւնը։ Ահա թէ մեր միապետականները ինչ միամտութեամբ են դատում մի ճառ։

«Պ. Գամբետտա խօսում է արդարադատութեան յարատևութեան մասին. նրան ամբաստանում են թէ նա կամենում է այդ կործանել։ Նա պնդում է բանակի մէջ խիստ կարգ (discipline) մտցնելու կարևորութեան մասին. ասում են թէ նա կամենում է ոչնչացնել բանակը. նա պախարակում է նրանց, որոնք իրանց ծայրայեղութեամբ վտանգի տակն են ձգում կրօնը, և պահանջում է, որ օրէնքները յարգվեն ամենքից, նրան կրօնի թշնամի են քարոզում։

«Վերջապէս նրա պրոգրամը վերաբերում են հանրապետական կուսակցութեանը պատկանող։ Ահա թէ ինչ տխուր միջոցների է դիմում յետադիմութիւնը, բայց համոզված ենք որ նա իր անազնիւ միջոցներով ոչ ոքի չէ կարող յիմարացնել։»

ԳԵՐՄԱՆԻԱ

—

«Indépendance Belge» լրագրում կարդում ենք հետեւեալը։

«Գերմանիայի կայսրը մեծահանդէս շքով կը մտնի Բերլին ուղղակի գալ հինգշաբթի, նոյեմբերի 5-ին։ Պ. Ֆօրկէնբէք, որ Բայիստագի նախագահ է, իբրև Բերլինի քաղաքագլուխ, կայսեր բարեաւ եկիք կը մաղթէ։ Reichsanzeiger հրովարտակներ է հրատարակում, որոնց հրամանի զօրութեամբ պէտք է քանդվին և ոչնչանան հետեւեալ ժողովները.

Մէկերանի ժողովրդական ժողովը, Վայդէնբուրդի գործաւորների ներդաշնակութեան ժողովը, Օֆֆենբախի եղբայրա-գուսանական ժողովը և մի քանի ուրիշները։»

ՍՊԱՆԻԱ

—

«Indépendance Belge» լրագրում կարդում ենք հետեւեալը։

«Հոկտեմբերի 25-ի եղեռնագործութեան հեղինակը, իր Սալագերս բանտում պահում է մի և նոյն առաջվայ խաղաղ և պահեցող դրութիւնը դէպի այն դատաւորները, որոնց յանձնված է քննել դրա գործը. դրան տարվել են մի Կատալան, որի հետ դա ապատ խօսում է։ «Politica» լրագիրը՝ երէկ երեկոյեան հրատարակեց, որ քննութիւնները վերջանալու վրա են, և որ շատ կարճ միջոցում դրան կը ներկայացնեն Մադրիդի դատարանին։

«Փիւան Օլիվա Մօնկազիի պաշտպանութիւնը կը յանձնվի մի նշանակութիւն ունեցող փաստաբանի։ Մեղապարտը ոչ մի պաշտպան չէ կամենում, և նա զարմացնում է քննիչ դատաւորին իր պաղարիւնութեամբ։

«Նոյն իսկ եղեռնագործութեան դիշերը՝ դրան փոխադրեցին Սալագերս բանտը։ Մադրիդի մամուլը միաձայն ցանկանում է հոկտեմբերի 25-ի եղեռնագործութեան դատապարտելը։»

ՑՈՒՆԱՍՏԱՆ

—

Քաղաքական հարցի մասի վէճը տևեց շարունակ հինգ օր, և միայն երէկ, 19 հոկտեմբերի, փակվեցաւ։

Ամեն կողմից տաք տաք յարձակվեցան մինիստրութեան վրա այն քաղաքականութեան մասին, որ նա հետևեց արևելեան ճգնաժամի միջոցին։

Պ. Կումունդուրոս ներկայացրեց իրան վերաբերեալ ինչ որ անցել էր Ցունաստանում և սահմանակից նահանգներում արևելեան ճգնաժամից սկսած մինչև Բերլինի դաշնագրութեան ստորագրութիւնը. բնականապէս նա արդարացրեց մինիստրութեան ջանքերը, որոնց շնորհիւ երևան եկաւ հելլենական հարցը, և Ցունաստանը ստացաւ այն՝ ինչ որ կարելի էր յուսալ ներկայ հանգամանքների մէջ։ Յետոյ նա բացատրեց իր մտքերը, ապագայի վերաբերմամբ։

Խորհրդի նախագահը հաստատ հիմքեր ունի հաւատալու, որ սահմանների որոշելու գործը յօգուտ Ցունաստանի պէտք է վճռուի օտար տէրութիւնների՝ խաղաղ միջամտութեամբը։

Պ. Կումունդուրոս տեսնելով, որ ամեն կողմից յարձակվում են իր վրա, և թէ իր դրութիւնը մի քիչ խախուտացած է՝ հրատարակեց թէ մինչև որ ժողովը կատարեալ վստահութիւն չը ցոյց տայ իրան, նա այլ ևս չէ կարող շարունակել իր վրա դրած պարտաւորութիւնը. հետևաբար նա խնդրեց որ ժողովը յայտնէ իր կարծիքը դրական կամ բացասական կերպով այն քաղաքականութեան մասին, որին նա հետևել է։ Հակառակութիւն բարձրացաւ մի այս տեսակ օրական հարցի դէմ, ասելով նրան որ երբ օրական հարցը կը հասնի մինիստրութենից առաջարկած օրէնքի ծրագրին՝ այն ժամանակ ժողովը կը յայտնէ նրան իր վստահութեան սահմանը։ Քուէարկեցին և 72 ձայների առաւելութեամբ 69-ի դէմ վճռեցաւ որ վստահութեան հարցը օրական դառնայ։ Աթէնքում խոր գիշերվայ մի ժամին ծախվում էր պ. Կումունդուրոսի լրագիրը «յաղթութիւն մինիստրութեան» աղաղակներով։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՓԱՐԻԶ, 5/17 նոյեմբերի։ Այսօր հասաւ այստեղ կոմ Շուվալով։

ԼՎՕՎ, 5/17 նոյեմբերի։ Զահահանդիսի արգելելու պատճառով պատգամաւորների ժողովի անդամների մի մասը նշանաւոր անկարգութիւններ է արել։ Պոլիցիայի կօմիսարը և մի քանի պոլիցիականներ ենթարկվեցան բռնութիւնների, այդ պատճառով պոլիցիան ստիպուեցաւ դիմել զէնքի։ Մի քանի մարդիկ վիրաւորված են, ոմանք կալանաւորված են։ Գիշեր ժամանակ զօրքերին հրամայված է չը հեռանալ զօրանոցներից։

ՀՌՕՄ, 5/17 նոյեմբերի։ Լուր կայ, որ Իտալիայի Հումբերտ թագաւորը, Նէապոլի երկաթուղու կայարանից դուրս գալու ժամանակ թեթև կերպով վիրաւորված է դանակով։ Եղեռնագործը կալանաւորված է։

ՆԷԱՊՕԼ, 6/18 նոյեմբերի։ Թագաւորը վիրաւորված է ձեռքում։ Մինիստր—նախագահ Կայրոլի թեթև վիրաւորված է ձախ կողքում։ Թագաւորը յանցաւորի գլխին խփեց սրով, մինիստր Կայրոլի նրան մաղերից բռնեց։ Կիրասիրների մի կապիտան յանցաւորին վիրաւորելուց յետոյ յանձնեց նրան պահապաններին։ Թագուհին և Նէապոլի իշխանը, որոնք թագաւորի հետ մի և նոյն կառքում նստած էին, հանգիստ մնացին։ Յանցաւորի անունն է Ջիովանի Պասսամանտէ։ Նա յայտնեց, որ ոչ մի ընկերութեան չէ պատկանում, այլ չէ կամենում որ թագաւորներ լինեն։

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍ

որ գտնվում էր Գոլովինսկի փողոցի վրա Սարաջովի տանը, այժմ գտնվում է նոյն ԳՈԼՈՎԻՆՍԿԻ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ, ՇԻՕԵՎԻ ՏԱՆԸ, գերմանական կլուբի և Վեստլեի լուսանկար խանութի մօտ մի և նոյն սանդուղքով: Այցելողների համար ԲԱՑ Է ԱՄԵՆ ՕՐ առաւօտեան 9 ժամից մինչև երեկոյեան 5 ժամը: Հաւաքածուին ՆՈՐ ԲԱՆԵՐ ԵՆ ԱՒԵԼԱՑՐԱԾ:

1—25

Մամուլի տակից դուրս եկաւ
ՕՐԱՑՈՑՑ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ

1879 թ. համար.

Գինն է 15 կոպ. Հարիւրով գնողներին 20% զեղչումն կը լինի: Օտարաքաղաքացիք ճանապարհածախսը վճարումն՝ հարիւր օրինակի համար — 1 ր ,,
յիսունի համար — ,, 60 կ

ԹԻՖԼԻՍ

1878

Նոյեմբերի 12-ին կիրակի երեկոյ Երաժշտական դահլեճում

Պ. ԱՄԵՐԻԿԵԱՆԸ ԿԸ ՏԱՑ

Բարեսէր մասնակցութեամբ

Տ. Շահազիզեանցի, պ. Ումիկովի և Հայ-Թատրոնասիրաց

Թատերական նուագահանդէս և գրական երեկոյ

I

ՀԱՅ ՆԿԱՐԻՉՆԵՐ

Վոդեվիլ 1 արարուածով՝ հեղ. Կոմս Սալլագուբի, փոխարկեց պ. Զմշկեան, իսկ կուպլետները յարմարացրեց պ. Ամերիկեան

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Պօղոս Գնունի, նկարիչ	Պ. ՄՕԻՆԵԱՆՑ
Արշակ, սորա բարեկամ, նկարիչ նմանապէս	Պ. ԼԱԼԱՅԵԱՆՑ
Արզուխանեանց, տիտուլեարնի սօվետնիկ	Պ. ՍԱՑԻՆԵԱՆՑ
Նինօ, սորա աղջիկը	Տ. ՇԱՀԱԶԻԶԵԱՆՑ
Գրիգոր, Գնունու ծառան, ղարաբաղցի	Պ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՑ

Անցքը պատահում է Թիֆլիսում

II

ՀԱՅ-ՎՐԱՑՍԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՍ

Պարունակութիւն	Անձինք
1) ՀԱՅԻ ԳԱՆԳԱՏԸ, Գամառ Քաթիպայից կարտասանէ.	Պ. ԶՄՇԿԵԱՆ
2) ԽԷՐ ՍԷՕԻԼԱՄԱԶ, առած՝ կը պատմէ.	Պ. ԱՄԵՐԻԿԵԱՆ
3) ԱՌԱԾ ԹԻՖԼԻՍԻ ԿԵԱՆՔԻՑ, կը պատմէ	Պ. ՈՒՄԻԿՕՎ
4) ՏԻՐԱՑՈՒ ՏԷՐՏԷՐԱՑՈՒ, զաւեշտ կը պատմէ	Պ. ԱՄԵՐԻԿԵԱՆ
5) ԱՌԱԾ ՎՐԱՑԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ, կը պատմէ.	Պ. ՈՒՄԻԿՕՎ

III

ԲԱՐԲՈՒԼԻԷ

Կոմեդիա 1 արար. հեղ. Մոլիերի. երգային փոխարկութիւն Ամերիկեանի

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Բարբուլիէ	Պ. ՍԱՑԻՆԵԱՆՑ
Անձելիքայ, դուրա կինը	Տ. ՇԱՀԱԶԻԶԵԱՆՑ
Ժորժ, սորա հայրը	Պ. ՀԱԽՆԱԶԱՐԵԱՆՑ
Վիլլա, դուցա աղգականը.	Պ. ՄՕԻՆԵԱՆՑ
Ժաքօ, Բարբուլիէի ծառան	Պ. ՇԱՐԲԱՐՕՆԵԱՆՑ
Բժիշկ, սորա դրացին.	Պ. ԱՄԵՐԻԿԵԱՆ
Վալերիոս, Անձելիքի սիրահարը	Պ. ՍԱՑԻՆԵԱՆՑ

Անցքը պատահում է Փարիզում

IV

ԿՕՄԻԿ-ԿՈՒՊԼԷՏՆԵՐ

ԿԵՐԳԷ Պ. ԱՄԵՐԻԿԵԱՆԸ

Въ Воскресенье 12-го ноября, въ залѣ бывшаго Музыкальнаго Общества представлено будетъ на Армянскомъ языкѣ 1) НАШИ ЖИВОПИСЦЫ, водев. въ 1 дѣйств. соч. Гр. Саллагуба, передѣлалъ съ русскаго Г. Чимишкіанцъ. 2) АНТРАКТЪ съ разсказами и куплетами. и 3) БАРБУЛЬЕ комедія въ 1 дѣйств. Мольера, куплеты передѣлалъ Г. АМЕРИКІАНЪ.

ՏԵՂԵՐԻ ԳԻՆԸ

Թիկնաստաբաններ 4 հոգու (ընտանեկան)	8 ր.	Թիկնաթոռ	2 ր.
Թիկնաբազկաթոռ	4 ,,	Աթոռ	1—50 կ.
Բազկաթոռ	3 ,,	Մնացած աթոռներ	1 ր.

ՍԿԻԶԲՆ Է 7½ ԺԱՄԻՆ

Տոմսակները կարելի է առնել, պ. Լանկօի երաժշտական մագազինում Արծրունու գալէրէյում, պ. Տէր-Սարգսեանցի Թղթավաճառանոցում պօլիցի տակը և իրան պ. Ամերիկեանից, իսկ ներկայացման օրը Թատրոնի կասսում:

ԹԻՖԼԻՍԻ ՎՇՏԱՌԱԿԱՆ ԻՎԱՆ ՆԻԿՈՂՈՍՈՎ.

Յայտնում եմ Թիֆլիսի և օտար քաղաքների պատուելի հասարակութեանը, որ գնել եմ եւրօպական քաղաքներում 200 հատ ամենաարտիր կարելու մեքենաներ. այսինքն մեծ բալկօնաւոր ՏԵԻՏՕՆԻԱ, ՄԱՆՍՖԷԼԴ, ՎԵԼԼԵՐ-ՎԵԼՍՕՆ, զինջեր, մեգիում, պօլլակ, շմիդտ, մավի առիւծ, Սիմսօն, և ձեռքի մեքենաներ սիստեմ Բրունիա, Զերմանիա, Թէնանիա Ֆօրտունա, զինջեր Սակսօնիա, Լիտերվանցեր, շատուլա, և Վելլեր Վիլսօն շատուլկայով: Զը նայելով ահագին կուրսին ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ԱՄԵՆԱԷԺԱՆ ԳՆՈՎ: Անվարձ սովորեցնում ենք ԳՈՐԾԱԾԵԼ մեքենան: Ապահովում ենք ԵՐԵՔ տարի: Վաճառատունը գտնվում է ՀԱՑՈՑ ԲԱԶԱՐՈՒՄ, ԳԱՍՊԱՐՕՎԻ ՏԱՆԸ:

Իվան Ստեփանեան Նիկողոսով

2—3

ԻՍԱՑ ԵԳՕՐԻՋ ՓԻԹՕԵՎԻ ԳՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ

Ծախում է 5% ԱՌԱՋԻՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ փոխառութեան ՏՈՄՍԱԿՆԵՐ և ԱՐԵՒԵԼԵԱՆ երկրորդ փոխառութեան օբլիգացիաներ: Նոյնպէս գնում է ամեն տեսակ ՏՈԿՈՍԱԲԵՐ ԹՂԹԵՐ և կատարում է փոխարինութիւն ՄՕՍԿՎԱ հասարակ և հեռագրով:

Գրասենեակը ԲԱՑ Է ԱՄԵՆ ՕՐ հասարակ օրերը առաւօտեան 10 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ և 6-ից մինչև 7 երեկոյեան, իսկ տօն օրերը առաւօտեան 10-ից մինչև 12 ժամ: ԳՐԱՍԵՆԵԱԿԸ ԳՏՆՎՈՒՄ Է Սօլոլակում, Նագօրնայա փողոցի վրա, Իս. Ե. ՓԻԹՕԵՎԻ տանը:

2—5

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ նոյեմբերի 10-ին ներկայ տարվայ իր ներկայութեամբ կը լինի աճուրդ առանց կրկնաճուրդի քաղաքին պատկանող 156⁰/₁₀ քառակուսի սաժէն դատարկ հողը ծախելու համար: Այդ հողը գտնվում է II բաժնի 15-դ մասում գծային բատալիոնի զօրատան մօտ: 2—3

ԳՐԻԳՈՐ ՆԱՍԻՐԵԱՆԻ ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐԻ ԽՍՆԱՒԹՈՒՄ ԵՐԵՒԱՆԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱ

սատացել են մեծ քանակութեամբ ՖՐԱԿԻ ԵՒ ՏՐԻԿՕԻ ՍԻՒՐՏԻԿՆԵՐԻ ՇՈՐԵՐ, որսորդական ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺՕԿԵՏՆԵՐ, ձմեռային ՊԱԼՏՕՆԵՐ և ՎԱՐՏԻԿՆԵՐ, երեխայոց հագուստներ, ՎԵՐԱՐԿՈՒ—ԽԱԼԱՏՆԵՐ զարդերով, նոյնպէս ընդունվում են ՊԱՏՈՒԷՐՆԵՐ զինուորական և քաղաքական հագուստների համար: Ցոյս ունեմ, որ ինչպէս պատուիրողները նոյնպէս է գնողները ԲԱՒԱԿԱՆ ԿԸ ՄՆԱՆ:

2—75

Ծախվում է ՄԷԿ ՄԵԾ ԵՐԿԱԹԻ ԱՐԿՂ (կասսա) փոքր համար: Գնի համար կարելի է տեղեկանալ Կաթոլիկների եկեղեցու դիմաց Մելիք-Նուբարովի տանը:

3—5

Բարեսէր գործակցութեամբ նկարիչ Խոդոսովիչի և նրա առաջնորդութեան տակ, «Հայ նկարիչներ» վոդեվիլի խաղի ժամանակ կը ներկայացվի հետևեալ կենդանի պատկերներ.

1, Նկարիչի երազը, (փառքը և սերը պակում են նկարչին)

2, Ծառայի երազը, (Հռոմանիմը աղբիւրից է վերադառնում.)

ՔԱՐԱԾՈՒԽ „ԹՈՒՍԱՍՏԱՆ“ ՀԱԼԽՏԻ

(ՀԱՆՔԻՑ), ՈՐ ԳՏՆՎՈՒՄ Է ԶԷԼՕԲԱՆԻ ԱՐՈՒԱՐՁԱՆԻ ԿՈՒՐՍԷՔԱ ԳԻՒՂՈՒՄ

ԸՆԿ. ՆԷՅՄԱՆ—ՀԷՆԻՆԳ

Ծախվում է ՇԷՆԻՆԳԻ ՊԱՎԻԼԻՕՆՈՒՄ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԻԱՍԻՆ ԱՄՈՂՋ ՎԱԳՕՆՆԵՐՈՎ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՅԱՐԱՆԻՑ ՊՈՒԴԸ 25 ԿՕՊ., ԻՍԿ ՓՈՔՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ Ք. ԼԱՔԻ ՄԷՋ ԳՏՆՎՈՂ ՊԱՀԵՍՏԻՑ ՊՈՒԴԸ 28 ԿՕՊԷԿՈՎ:

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

(ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԷՐԷՅՈՒՄ)

Վաճառվում են հետևեալ հայերէն գրքերը՝

		Ր.	Կ.
1.	Ն. Տէր-Ղևոնդեան՝ Մայրենի լեզու. ա. տարի վեցերորդ տիպ.	35	
2.	» » բ. տարի չորրորդ տիպ.	40	
3.	» » գ. և դ. տ. երկր. տիպ.	70	
4.	Ղ. Աղայեանց՝ Ուսումն Մայրենի լեզուի, երրորդ տիպ.	—	15
5.	Տէր-Սահակեանի՝ Սկզբունք քրիստոնէական հաւատոյ.	—	50
6.	Գ. արքեպ. Այվազեան՝ Նախակրթանք գրաբար լեզուի մ. տ. հինգերորդ տիպ.	—	40
7.	Տէր-Դաւթեանց՝ Русское Слово	—	35
8.	Աբովեանց՝ Հայոց պատմութիւն երկրորդ տիպ.	—	60
9.	Հատընտիր ընթերցուածք ի մատենագրաց նախնեաց՝ հանդերձ ծանօթութեամբք Վիէննա Թորոսեան՝	4	—
10.	Թորոս Լևոնի պատմական վէպ աղգ. կեանքից	1	—

Այս օրերս կը ստանանք Վենետիկից Առձեռն բառարաններ, Հայաստանի քարտէզներ և ընտիր մատենագիրների աշխատութիւններից շատերը:

Дозволено Цензурою 17 Ноября 1878 г. Тифлисъ Типографія Мартиросіанца

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ